Հավելված
Հաստատվել է Մղարթ համայնքի
ավագանու կողմից 15.12. 2016 թ.
որոշում N 21-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄՂԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 – 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Հ ամայնքի ղեկավար՝ Ե. Նավասարդյանը

2016
ՄՂԱՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1.Համայնքապետի ուղերձը

2.Ի՞նչ է հնգամյա ծրագիրը

3.Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում

4.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

5.Համայնքի ըստ առանձին ոլորտների առաջնահերթ նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

6.Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում

7.Համայնքի ոլորտային կապիտալ ծրագրերի ձևակերպում և ամփոփում

8.Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները

Համայնքապետի ուղերձը

Ռազմավարական ծրագիրն ուղղված է Մղարթ համայնքի տնտեսության , սպորտի, մշակույթի և կրթության զարգացմանը: Բազմակողմանի քննարկումներ անցած այս ծրագիրն իր մեջ ներառում է այն բոլոր հիմնական արժեքները ու ուղությունները որոնք անհրաժեշտ են Մղարթ համայնքի պայծառ ապագայի համար: Չափազանց կարևորում եմ համայնքի զարգացումը ապահովող ծրագրի բոլոր ուղղությունները և մաղթում մեզ՝ բոլորիս արգասաբեր գործունեություն ի բարօրություն Մղարթ համայնքի փայլուն ապագայի:

Ռազմավարական ծրագրի հիմնական նպատակներնը.

խթանում գյուղատնտեսական մթերքների արտադրությանը

խթանում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը

նպաստում գործազրկության մակարդակի նվազեցմանը

աջակցություն սպորտի մշակույթի և հանգստի զարգացմանը

խթանում կրթական համակարգի զարգացմանը

Ի՞ՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Մաղրթի համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Ներկայացվող հնգամյա զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Մղարթ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

1. Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում

1.1 *Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ*

Պատմական համառոտ տեղեկատվություն համայնքի մասին

Լոռու մարզի (նախկին Թումանյանի շրջանի) Մղարթ գյուղը պատմական արձանագրություններում հիշատակվում է դեռևս 13-րդ դարի սկզբներից:Գյուղի տարածքում գտնվող խաչքարի 1206թ. թվակիր արձանագրությունը վկայում է,որ Մղարթի հանդամասը տվել են տեղում ապրող Մամիկոնյան իշխանին :

Գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս- արևելյան մասում,Վիրահայոց լեռնաշղթայի հարավային ճյուղավորումներից մեկի փեշին, ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1171,64 հա,բնակատեղը 52,7 հա, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 180 կմ, մարզկենտրոնից՝ 67 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 23 կմ: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ստեփանավանի տարածաշրջանի Կողես և Թումանյանի տարածաշրջանի Կ.Աղեկ , Արևածագ , Արդվի,Այգեհատ, Օձուն գյուղական համայնքներին:

Համայնքի տարածքում առկա է ոսկու հանքավայր:

1.2 *Ժողովրդագրություն*

Համայնքի բնակչությունը կազմում է 500 մարդ , որից տղամարդ 261 , կին 239

:Բնակչության սոցիալական կազմը հետևյալն՝

- երեխաներ մինչև 4 տարեկան – 10
- դպրոցականներ – 50
- բնակչություն 16 – 62 տարեկան - 356
- թոշակառուներ – 84
- հաշմանդամներ -21

ՄՂԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ: Համայնքապետարանի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը՝

- Աշխատակազմի քարտուղար
- Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ
- Աշխատակազմի 1 –ին կարգի մասնագետ
- Հավաքարար

ՄՂԱՐԹ **ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒ ՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակարանային ֆոնդը բաղկացած է 137 առանձնատներից և 1 բազնաբնակարան շենքից, որորոնք հիմնականում կառուցված են քարից: Մոտ 34 տները բնակեցված չէ :

Գյուղը գազաֆիկացված է 30%-ով :

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը –1171,64հա որից՝

- Վարելահող – 291.91 հա
- Խոտարք – 29.39 հա
- Արոտ – 562.48 հա
- Այլ հողատեսքեր - 20.57 հա
- Ընդամենը գյուղ. արտադրական – 9.85 հա
- Ընդամենը ընդերքօգտագործման – 40,09հա
- Էներգետիկայի հողեր – 0,01 հա
- Ընդամենը տրանսպորտի - 2.81 հա
- Ընդամենը ենթակառուցվածքների – 0.01 հա
- Ընդամենը պատմական և մշակույթի – 3,75 հա
- Անտառային հողեր – 155.61 հա
- Բնակավայրի հողեր – 52,68 հա
- Գերեզմանոց N1 –1,58 հա
- Ջրային հողեր – 1.92 հա
- Դաշտային ճանապարհներ – 10 կմ
- Ներհամայնքային ճանապարհ –6.0 կմ
- Գյուղատնտեսական նշանակության հողեր սեփականաշնորհված – 222.62հա :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղի բնակիչները մասնավորապես զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակմամբ: Համայնքում 173 տնտեսություն է , որից 98 – ը զբաղվում են անասնապահությամբ,

Ըստ որի առկա է խոշոր եղջերավոր անասուններ 412 գլուխ , ոչխար-այծ 639 գլուխ , խոզ 139 գլուխ, ձի-ավանակ 33 գլուխ , ճագար 18 գլուխ , թռչուն 1478թև , մեղվաընտանիք 10 , ինչը կազմում է բնակիչների եկամուտի հիմնական աղբյուրը:
Գյուղի խմելու ջուրը հանդիսանում են 6 բնական աղբյուրները: Ոռոգման համար օգտվում են Լոռու ջրանցքից , ներտնտեսային ոգոգման ցանց չկա , ոռոգումը կատարվում է մարգերով , որի պատճառով գրեթե 70% հողատարածքների ընդհանրապես չեն ոռոգվում , ինչը բերում է երաշտի դեպքում բերքի բավականին քանակության կորուստի: Ցանվում է համայնքի հողերից 326.0 հա, բազմամյա խոտերի ցանքը կազմում է 52.8 հա:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով: Ամսվա մեջ չորս անգամ կատարվում է աղբահեռացման աշխատանքներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ հիմնական դպրոց ինամյա ծրագրով : Դպրոցի շենքը բարվոք վիճակում է : Դպրոցի անձնակազմը բաղկացած է 19 աշխատողից ունի 47 աշակերտ:

ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ , ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1.2.1 Գյուղի մշակույթային կյանքը բաղկացած է ավանդական տոներով , ինչպես նաև մեծ շուքով պարտադիր նշվում է Հայրենական պատերազմի հաղթանակի օրը : Դպրոցի շրջանավարդների պատվին ամպայման կազմակերպվում են տոնահանդեսներ գյուղի բոլոր բնակիչների մասնակցությամբ: Գյուղը ունի մշակույթի տուն , որը չնայած վթարային վիճակին ,մշակույթային կենտրոն է՝ այդտեղ անցկացվում են բոլոր միջոցառումները , կազմակերպում են համերգներ,գործում է նաև գրադարանը 8026 կտոր գրքային ֆոնդով: Կառուցված մարզադաշտը հավաքում է ֆուտբոլասերների խաղի:Գյուղն ունի եկեղեցի վերանորոգված տանիքով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ բուժկետ , գտնվում է ուսուցչի տան շենքում, հատկացված երկու սենյակում: Բուժկետը կահավորված է բոլոր անհրաժեշտ պարագաներով : Բուժկետում աշխատում է մեկ բուժքույր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- *Չնայաց գյուղի ոչ հետաքրքիր և ծանր կենցաղային պայմաններով հագեցած առօրյաներն բնակիչների ցանկությունը ապրել իրենց պապական հողերում:*
- *Գյուղի բնակիչների աշխատասիրության շնորհիվ քիչ են անմշակ վարելահողեր և խիստ աղքատ ընտանիքները:*
- *Գյուղում կատարվում է հարկերի հավաքագրումը 95% - ով , ինչը նպաստում է բյուջեի գրեթե կատարմանը և հնարավորինս համայնքի խնդիրների լուծմանը:*
- Բնակչության զգալի մասը զբաղվում է հողագործության և անասնապահության , որպես երկրորդական եկամուտ դիտվում է համայնքում առկա ոսկու հանքը : Լուծված է աշխատունակ բնակչության զբաղվածության հարցը :

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ներհամայնքային ճանապարհների, փողոցների վատ վիճակը
Խմելու ջրի սակավությունը և ոչ կենտրոնացված մատակարարումը
Սոցիալապես անապահով բնակչության տոկոսը
Ոռոգման համակարգերի կառուցման անհրաժեշտությունը
Արտադրված գյուղատնտեսական և անասնապահական մթերքների իրացման վատ վիճակը
Աշխատատեղերի բացակայությունը
Բնակչության արտահոսքը
Ծնելիության ցածր մակարդակը
Գյուղատնտեսական մեքենաների և տեխնիկայի անբավարար ու անմխիթար վիճակը
Հեռագնա արոտավայրերի ոչ լիարժեք օգտագործումը
Վարելահողերի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման անբավարար մակարդակը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ☐ Աշխատուժի առկայություն
- ☐ Գյուղատնտեսության զարգացման հնարավորություն

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կատարել բարեփոխումներ , որոնք կհանգեցնել գյուղի բարեկարգման և զարգացմանը: Բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական , մշակույթային կյանքը;Ստեղծել բնակչության հանգսի պայմաններ:

Բարեփոխումներ՝

- Մշակույթի տան վերանորոգում
- Մաշված , ոչ սարքին գյուղ տեխնիկայի օտարում , նորի ձեռք բերման նպատակով
- Ներհամայնքային ճանապարհների բարելավում
- Հողագործության և անասնապահության զարգացումը
- Գյուղի գիշերային լուսավորման ցանցի ավելացումը

ԾՐԱԳԻՐ 1.

Ոլորտային կապիտալ ծրագրի հայտ

Հանդիսությունների սրահի տանիքի վերանորոգում 2017թ. ընթացքում
(Ոլորտի անվանումը)

«Տանիքի 380 քմ թիթեղապատում»
(Ծրագրի անվանումը)

Մղարթի համայնքապետարան
(Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատուն)

Ծրագրի ընդհանուր արժեքը **1180000** դրամ

Ծրագրի հիմնավորումը՝ *Հին տանիքը գտնվում է անմխիթար վիճակում, լինելով կառուցված ազբեստի բարակ ծածկից տարիների ընթացքում ենթարկվել է քայքայման, ինչը կհանգեցնի անձրևաջրերի և ձմռանը ձնհալից առաջացած ջրերի ներս թափանցմանը, որը պատճառ կդառնա ամբողջ կառույցի ներքին պատերի և առաստաղի քայքայմանը:*

Ծրագրի նպատակները՝ *Ծրագրի նպատակը է փրկել համայնքի հանդիսությունների սրահի տիպային շենքը, որը ձեռք է բերվել 2016 թ, որպես համայնքային սեփականություն:*

Ծրագրի խնդիրները ՝ *Աշխատանքներ տանել համայնքի ակտիվ խմբերի հետ, ովքեր ցանկություն կհայտնեն ներդրում կատարել աշխատուժի տեսքով, կազմել 5-6 հոգիանոց աշխատանքային խումբ, ձեռք բերել գրավոր համաձայնագիր, կնքել պայմանագիր պահանջվող աշխատանքների կատարման մասին: Կազմել ծրագրի բյուջեն:*

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Մաքրման աշխատանքները				x	x	x	x					
2.	Տանիքի վերանորոգման աշխատանքները						x	x					

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին դրամ	Ընդամենը դրամ	Որից		
						Համայնքի բյուջեից	Ներդրում գումարային տեսքով	Ներդրում աշխատուժի տեսքով
	Նյութեր				1016000	1016000		
1	Թիթեղյա ծածկ	քմ	380	2200	836000	836000		
2	Տախտակ	խմ	1	150000	150000	150000		
3	Պտուտակ	հատ	1000	30	30000	30000		
1	Աշխատանքի անվանումը				164000			
2	Փայտածածկի վերանորոգում	քմ	380	132	50000			50000
3	Թիթեղածածկի տեղադրում	քմ	380	300	114000			114000
	Ընդամենը				1180000	1016000		164000

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝ *Կկանխվի տանիքից ջրերի ներս թափանցմանը՝ արդյունքում կփրկվի հանդիսությունների սրահի շենքը՝ որտեղ համայնքը կունենա նոր կահավորված հանդիսությունների սրահ:*

ԾՐԱԳԻՐ 2.

Ոլորտային կապիտալ ծրագրի հայտ

Մշակույթի տան ծածկի մասնակի վերանորոգում
(Ոլորտի անվանումը)

«Վերանորոգում»
(Ծրագրի անվանումը)

Մղարթի համայնքապետարան
(Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատուն)

Ծրագրի ընդհանուր արժեքը **830000** դրամ

Ծրագրի հիմնավորումը՝ *Համայնքի մշակույթի տունը ,որտեղ գտնվում է համայնքապետարանը և համայնքի գրադարանը կպահպանվեն հետագայում ավելի վթարային դառնալուց:*

Ծրագրի նպատակները՝ *Ծրագրի նպատակը՝ կանխել համայնքի մշակույթի տան հետագայում ավելի վթարային դառնալուց*

Ծրագրի խնդիրները՝ *Աշխատանքներ տանել համայնքի ակտիվ խմբերի հետ, ովքեր ցանկություն կհայտնեն ներդրում կատարել աշխատուժի տեսքով, կազմել 5-6հոգիանոց աշխատանքային 1-ական խումբ, ձեռք բերել գրավոր համաձայնագիր, կնքել պայմանագիր պահանջվող աշխատանքների կատարման մասին: Կազմել ծրագրի բյուջեն:*

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Տանիքի փայտածածկի վերանորոգում					x							
2.	Ներքին աշխատանքներ						x						

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին դրամ	Ընդամենը դրամ	Որից		
						Համայնքի բյուջեից	Ներդրում գումարային տեսքով	Ներդրում աշխատուժի տեսքով
	Նյութեր				720000	720000		
1	շինափայտ	խմ	2	150000	300000	300000		
2	ազբոշիֆեր	հատ	100	4000	400000	400000		
3	մեխ	կգ	20	1000	20000	20000		
	Աշխատանքների անվանումը				110000			110000
1	Փայտածածկի թարմացում	քմ	120	417	50000			50000
2	Ծածկի վերանորոգում	քմ	150	400	60000			60000
	Ընդամենը աշխատանքների համար				830000	720000		110000

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝ Կունենանք բարեկարգ տանիք և կկարողանանք հետագայում վերանորոգել մշակույթի տունը

ԾՐԱԳԻՐ 3.

Ոլորտային կապիտալ ծրագրի հայտ

Համայնքի ներհամայնքային ճանապարհների նորոգում
(Ոլորտի անվանումը)

«Խճապատում և ավազապատում»
(Ծրագրի անվանումը)

Մղարթի համայնքապետարան
(Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատուն)

Ծրագրի ընդհանուր արժեքը 459000 դրամ

Ծրագրի հիմնավորումը՝ *Համայնքի ունի շուրջ 58 հատ մարդատար մեքենաներ և 6,0 կմ հասնող ներհամայնքային ճանապարհներ, որը գտնվում է անմխիթար վիճակում, անհրաժեշտ կատարել փոսալցում, կանխել մեծ փոսերի առաջացմանը, որը կխցանի թեթև մարդատար մեքենաների շարժմանը:*

Ծրագրի խնդիրները՝ *Աշխատանքներ տանել ձեռք բերել պայմանավորվածություն դրսից ներս գրավել 2 միավոր տեխնիկա (բարձող և տեղափոխող) քանի որ համայնքը չունի նման տեխնիկա, նախորոք կնքել համաձայնություն վերանորոգվող հատվածի հարևանությամբ ապրող բնակիչների հետ, ովքեր ցանկություն կհայտնեն կատարել ներդրում աշխատուժի տեսքով, ձեռքով կատարել փոսալցնում: Կազմել ծրագրի բյուջեն պահանջվող բոլոր հավելվածներով:*

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2019թ Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Տեղափոխման աշխատանքները						x						
	Հարթեցման աշխատանքները						x						

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին դրամ	Ընդամենը դրամ	Որից		
						Համայնքի բյուջեից	Ներդրում գումարային տեսքով	Ներդրում աշխատուժի տեսքով
	Նյութեր				256000	256000		0.0
1	Դիզելային վառելանյութ	լիտր	800	320	256000	256000		0.0
2	Կատարվող աշխատանքները				203000	0.0		203000
3	Խճաքարի բարձում մեքենայով	խմ	50	80	4000	0.0		10000
4	Ավազի քանդում և բարձում մեքենայով	խմ	700	100	70000	0.0		84000
	Ավազի և խճաքարի տեղափոխում մեքենայով 1կմ	հերթ	130	600	78000	0.0		78000
	Փռում մեքենայով	խմ	750	60	45000	0.0		45000
	Ընդամենը միասին				459000	256000		203000

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝ Կունենանք բարեկարգված ներհամայնքային ճանապարհներ, անկախ եղանակային պայմաններից բոլորին հասանելի կլինի անվտանգ երթևկությունը,կնվազի մեքենաների պահպանման ծախսերը :

ԾՐԱԳԻՐ 4.

2019թ-ՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Գյուղական համայնքի կենտրոնական ենթակառուցվածքների զարգացման ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային կառավարման բնագավառում նպատակադրվում է բարելավել կանանց, տղամարդկանց, երեխաների, հաշմանդամ անձանց, տարբեր սոցիալական խմբերի ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման գործընթացներում, ինչպես նաև ապահովել հանրային ծառայությունների հասանելիությունը: Ներկայիս դրությամբ գյուղի 60%, ընդամենը 41 հասցե է բարեկարգված: :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիշերային լուսատուների քանակաքանակը ավելացնելով մինչև 60 հատ գյուղի լուսավորության համակարգում նպաստել 100 %-ով, ինչը բնակիչների կոգեբանական տրամադրությունը կբարձրացնի: :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կազմակերպությունների կամ գեղեցիկ գյուղ հասարակության և նախագծային կազմակերպությունների բանակցությունների միջոցով գյուղի ամբողջ տարածքում լուսավորության համակարգի բարելավման նպատակով ներգրավել գյուղի բնակիչներին, նրանց մասնակցությունը ապահովելով գյուղի զարգացման գործընթացում, նրանց հանձնարարելով գյուղի բարեկարգման աշխատանքներ:

ԾՐԱԳԻՐ 5.

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Մաշված , ոչ սարքին գյուղ տեխնիկայի օտարում , նորի ձեռք բերման նպատակով

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախկին տնտեսության լուծարման գործընթացից համայնքապետարանին որպես սեփականություն հասել է գյուղ . տեխնիկա՝ խոտհնձիչ կոմբայն 1 հատ , հատիկ հավաքող կոմբայն 1 հատ , տրակտորներ : Տվյալ տեխնիկական շահագործելու , վերանորոգելու , սարքին պահելու համար մեծ ծախսեր է անհրաժեշտ , ինչպես նաև ընդունելով մշակվող տարածքների չափերը, մասնավոր լինելու հանգամանքը , ճիշտ է ձեռք բերել չափերով փոքր , քիչ վառելիք օգտագործող գյուղ. տեխնիկա , որը շահագործման համար մատչելի է և տնտեսող , ինչը չի կարելի նշել ներկա , լավագույն դեպքում գործող , տեխնիկայի մասին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքում գյուղատնտեսության զարգացում , գյուղական մթերքի որակի և քանակի ավելացման նպատակներով օտարել ոչ սարքին և առավել մաշված գյուղ. Տեխնիկան:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից ոչ սարքին և առավել մաշված գյուղ. տեխնիկայի օտարումից առաջացած ֆինանսական միջոցներ համայնքում անհրաժեշտ նոր գյուղ. տեխնիկայի ձեռք բերման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 6.

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բերքի պահպանման համար անհրաժեշտ հակակարկտային կայաններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բերքի պահպանման հարցը խոցելի է : Հաճախ կարկուտների պատճառով բերքի կորստի չափերը զգալի են , ինչը խփում է գյուղացու ֆինանսական վիճակին և կյանքի զարգացմանը: Հակակարկտային կայանների առկայության դեպքում բերքի 70% երաշխավորված է:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1 միավոր հակակարկտային կայանի գործողության շառավիղը 80 հա է , իսկ գինը 5000,0 հազ. դրամ : Մղարթ համայնքի մշակվող տարածքը 336.0 հա , որից միամյա ցանքսերը շուրջ 53,0 հա, ամբողջը պահպանելու համար անհրաժեշտ է 3 միավոր հակակարկտային կայաններ: Բայց համայնքը ունի 1 միավոր, անհրաժեշտ է այս հնգամյա զարգացման ծրագրով ձեռք բերել եվս 1 միավոր:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից ոչ սարքին և առավել մաշված գյուղ. տեխնիկայի օտարումից առաջացած համապատասխան ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ներկայացված ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ է համայնքի ֆինանսական միջոցների ճիշտ գնահատումը և կանխատեսումը:

Լոռու մարզի Մղարթ համայնքի եմանուտները և կանխատեսումը հազար դրամ

հ/հ	եկամտի անվանումը	2016թ. 01.12.2016 դրությամբ փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1.	Հողի հարկ	2297.3	**2302,4**	2320.0	2350.0	2370.0	2400.0
2.	Գույքահարկ	684,3	**829,3**	800.0	820.0	830.0	840.0
3.	Պահ. Հողերի և այլ գույքի վարձ/վճ	2873,5	**2900**	2900.0	2900.0	2900.0	2900.0
4.	Տուրքեր և վճարներ	30	**30.0**	50.0	50,0	50,0	70,0
Ընդ. Սեփական եկամուտներ			**6061,7**	6070,0	6090.0	6100.0	6130,.0
5.	Պաշ.տրանսֆերտներ դոտացիա	6184,4	**6184,6**	6200,0	6200,0	6200,0	6200,0
Ընդամեն եկամուտներ		12098,1	**12246,3**	12270,0	12290,0	12300,0	12330,0

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

h/h	ցուցանիշներ	չափի միավոր	2016թ. փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	համայնքի տարածքը	հա	1171,64	1171,64	1171,64	1171,64	1171,64	1171,64
2	բնակչության թիվը	մարդ	500	501	494	498	500	507
3	ծնունդ	մարդ	3	5	5	6	8	9

4	մահացություն	մարդ	6	2	3	4	3	3
5	աշխ. ռեսուրսներ	մարդ	369	381	374	378	380	385
6	Գործազրկության մակարդակը	տոկոս	11	10	8	7	7	6
7	խանութ	հատ	2	2	3	3	3	4
8	պահուստային հողեր	հա	69,29	69,29	69,29	69,29	69,29	69,29
9	խմելու ջրի ներցանցային երկ.	կմ	9,0	9,0	9,0	9,0	9,0	9,0
10	Ներհամայնքային ոռոքման ցանցի երկ.	կմ	-	-	-	-	-	-
11	ոռոքման համակարգի	հա	98,8	98,8	98,8	98,8	98,8	98,8

	տակ ընկած հողեր							
12	ներհամ. ճանապ.երկարությո	կմ	6,0	6.0	6.0	6.0	6.0	6.0
13	ոչ բարեկարգ ճանապ.	կմ	5,0	5,0	4,5	3,0	2,0	-

1.3

1.4 ***Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը***

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավա ության 14.03.1997թ. թիվ 51 Ա և 03.02.2005թ N 176 Ա որոշմամբ

- Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակի բնութագրումը

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը պահպանվել է մասնակիորեն և տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Համայնքի ունեցած գյուղ գործիքները և տրանսպորտը գտնվում են անմխիթար վիճակում և ենթակա են դուրս գրման:

Համայնքում կա 137 առանձնատուն: Ոռոգման ջրացանց համայնքը չունի:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

h/h	Արտադրության անվանումը	Քանակը տն
1	ցորեն	756

2	կարտոֆիլ	1050
3	բանջարաբոստանային կուլտուրաներ	5
4	կաթ	170
5	միս	12
6	մեղր	0,4
7	բուրդ	1

h/h	Ցանքատարածություններ	Քանակը հա
1	հացահատիկ	189
2	կարտոֆիլ	35
3	առվույտ	1

h/h	Անասնագլխաքանակ	Քանակը հատ
1	խոշոր եղջերավոր անասուն	412
2	մանր եղջերավոր անասուն	639
3	խոզ	139
4	թռչուն	1478
5	մեղվարնտանիք	10
6	ձի	31

h/h	Գյուղատնտեսական մեքենաներ	Քանակը հատ

1	թրթուրավոր տրակտոր	8
2	Անիվավոր տրակտորներ	6
3	խոտհնձիչ	3
4	կցասայլ	6
5	գութան	8
6	կուլտիվատոր	2
7	շարքացան	1

Աղյուսակ 1. Համայնքի ենթակառուցվածքների գնահատում

Հ/հ	Կառույց Հասցե	Կառուցման տարեթիվ	Չափ. միա-վոր	Քանակ	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք
1.	Հովվի տնակներ <<Ղարախաչ>>	1971թ.	գլուխ	10	Քանդված առանց տանիքի	կա
2.	Գարաժի շենք	1956			անբավարար	կա
3.	Սիլոսի հորեր	1973	Հատ/տ	2/400	բավարար	կա
4.		1965			անբավարար	քանդման ենթակա
5.	Ոչխարանոց <<Երկու երես>>	1989	գլուխ	300	կիսակառույց	ոչ
10	Կուլտուրայի տուն	1971			վթարային	կա
11	Հանդիսությունների սրահ	2016		200	անհամապատասխան	կա
12	Ավտոբուս ԿԱԶ 685	1980		15	Ապակոմպլեկտավ.	կա
13	Անիվավոր տրակտոր Տ-16	1985			Ապակոմպլեկտավ.	կա

1.5 *Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում*

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակարանների թիվը
Համայնքում կա 137առանձնատուն և 1 բազմաբնակարան շենք
Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 34715 ք/մ, այդ թվում ունենք համայնքային սեփականություն

1.6 *Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն*

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը և մակերեսը, դրանց վիճակը
Ներհամայնքային փողոցների երկարությունը կազմում է 6.0 կմ, որից 1կմ ասֆալտապատված է, փողոցների ընդհանուր վիճակը անմխիթար վիճակում է,

Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի վիճակը, համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովվածության վիճակը
Համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկ չկա: Գործում է «ԳՐՈՒՐԱ » ՍՊԸ ,որը շահագործում է հետևյալ երթուղին՝
Մղարթ -- Ալավերդի – Մղարթ օրական 1 հերթ

1.7 *Առևտուր և սպասարկում*

Համայնքի տարածքում կա առևտրի 2 փոքր խանութ

1.8 *Կրթություն*

Համայնքում գործում է 1 հիմնական դպրոց:

Հիմնական դպրոցում սովորում են 43 աշակերտ ունի 19 աշխոտող, շենքի վիճակը բավարար է, մասնակի նորոգման կարիք ունի, գործում է 9 դասարան

1.9 *Մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ*

Մշակույթի տան հաճախողների և աշխատողների թիվը, շենքերի վիճակը, նորոգման և գույքային կարիքները

Մշակույթի տանը գործում են 1 խունբ ասեղնագործություն, ուր հաճախում են, շուրջ 11 երեխաներ, ունի 1 ուսուցանող: Շենքը գտնվում է գերեզանց վիճակում, Գույքի համալրման կարիք կա:

Գրադարանների, աշխատողների թիվը 1, գրքային ֆոնդը, շենքերի վիճակը, նորոգման և գույքային կարիքները
Գրադարան -- աշխատողները 1, գրքային ֆոնդը – 8026 կտոր գտնվում է մշակույթի տան շենքում: Գրքերի թարմացման նահրաժեշտություն կա:

1.10 *Առողջապահություն*

Համայնքում գործող 1 բուժկետ, ունի 1 (բուժքույր) աշխատող: Բուժկետը գտնվում է մշակույթի տան շենքում:

1,11 Կապ

Համայնքում կա <<Հայփոստի >>մեկ բաժանմունք 1 աշխատողով:
Հեռախոսակապի և հեռուստակայանի առկայությունը
Համայնքը բավականին զարգացած է բջջային հեռախոսակապը (ՎԻՎԱ ՍԵԼԼ , ԱՐՄԵՆՏԵԼ , ՅՈՒՔՈՄ)

1,12Համայնքի թույլ կողմեր

Խմելու ջրի ներհամայնքային համակարգի բացակայությունը
Չկա կենտրոնացված ջրամատակարարում: Համայնքը ջրամատակարարվում է բնական 6 աղբյուրներով: